



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 18

ՔԱՍԱԽ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Քասախ գյուղական համայնքի ավագանու 2014թ-ի դեկտեմբերի 8-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը

1. Քասախ գյուղական համայնքի ավագանու 2014թվականի հոկտեմբերի 13-ի N 15-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Քասախ համայնքի սեփականություն հանդիսացող մշակույթի և հանդիսությունների տունը հայ առաքելական եկեղեցական համալիրի վերակառուցելու մասին
3. Քասախ գյուղական համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 14-ի N 63-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
4. 2014 թվականի տարեկան գույքագրման արդյունքների ամփոփման և համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցները համայնքի հաշվեկշռում մուտքագրելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ գյուղական համայնքի համայնքային սեփականություն համարվող հողերը օտարելու թույլտվություն տալու մասին
6. Քասախ գյուղական համայնքում տեղական տուրքերի եվ վճարների 2015թվականի դրույքաչափերը սահմանելու մասին
7. Քասախ գյուղական համայնքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2015 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին
8. Քասախ գյուղական համայնքի ղեկավարի 2015թվականի վարձատրության չափը սահմանելու մասին

9.Քառախ գյուղական համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի և համայնքի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին

10. Քառախ համայնքի գյուղապետարանի ծառայողական ավտոմեքենային վառելիք հատկացնելու մասին

11. Քառախ գյուղական համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին

12. Քառախ գյուղական համայնքի փողոցների անվանակոչման մասին

Գործ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԵՐ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՂՈՒՄ

4. ՀԱԿՈՔՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՈՒՄ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅՇԱՆ

7. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱ ՄԿՐՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 19-Ն

ՔԱՍԱԽ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 15-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է

Քասախ գյուղական համայնքի ավագանու 2014թվականի հոկտեմբերի 13-ի՝ Քասախ գյուղական համայնքի 2014թվականի բյուջեն հաստատանելու մասին՝ N 15-Ն որոշման հավելվածում կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՐԱՄԻ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԴԱՐՏԱԿ

3. ԽԱՇԱՏՐՅԱՆ ՍԵՂՈՒԿ

4. ՀԱՎՈՐՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՈՒԿ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՂԱՅՏԱՆ

7. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՍԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱ ՄԿՐՏՅԱՆ



Հավելված
Քառասնյա գյուղական համայնքի ավագանու
2014թվականի հոկտեմբերի 13 -ի N 15-Ն
 որոշման

Հավելված
Քառասնյա գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 8 -ի N18-Ն
 որոշումից

Ծրագիր	Հոդված	Հոդվածի անվանումը	08.12.2014թվ- ի դրությամբ	պակասեցու- մ /-/ կամ ավելացում +/	ճշտված քույշե
		<i>Օախսային մաս</i>			
11-1-2	4891	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (ՎԱՐՉ. ԲՅ.)	935,0	-935,0	0,0
08-2-4	4269	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2000,0	-517,78	1482,2
08-2-4	4287	ԿԵՆՏՐԱԴԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՆԴԻ ՆՅՈՒԹԵՐ	0,0	+517,78	517,8
08-2-4	4239	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	250,0	+250,0	500,0
06-6-1	4111	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՉԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ	7800,0	-325,0	7475,0
06-6-1	4264	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ	4457,8	+533,8	4991,6
01-6-1	4241	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1700,0	-590,0	1110,0
01-6-1	4251	ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒԹՅՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ	800,0	-357,8	442,2
01-6-1	4269	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1200,0	-80,0	1120,0
01-6-1	4212	ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4300,0	+500,0	4800,0
02-2-1	4239	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	50,0	-50,0	0,0
01-1-1	4111	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՉԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ	18358,4	-1300,0	17058,4
01-1-1	4213	ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	210,0	-130,0	80,0
01-1-1	4221	ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՒՄՈՒՄՆԵՐ	20,0	-8,0	12,0
01-1-1	4234	ՏԵՂԱԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	200,0	-53,0	147,0
01-1-1	4235	ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	350,0	-350,0	0,0
01-1-1	4239	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	100,0	-100,0	0,0
01-1-1	4251	ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒԹՅՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ	100,0	-100,0	0,0
01-1-1	4252	ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ	550,0	-40,0	510,0
01-1-1	4267	ԿԵՆՏՐԱԴԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՆԴԻ ՆՅՈՒԹԵՐ	950,0	-40,0	910,0
01-1-1	4269	ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ	400,0	-150,0	250,0
08-2-3	4637	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱԵՆՈՐԴՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	15000,0	-1100,0	13900,0
09-1-1	4637	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱԵՆՈՐԴՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	23000,0	+2500,0	25500,0
09-5-1	4637	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱԵՆՈՐԴՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	7998,0	+1925,0	9923,0
		<i>Ընդամենը ծախսեր</i>	90729,2	0,0	90729,2

Քառասնյա համայնքի ղեկավար

Ա. Մկրտչյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 20

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաքելությունը՝ համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն Քասախ համայնքի սեփականություն հանդիսացող մշակույթի և հանդիսությունների տունը հայ առաքելական եկեղեցական համալիրի վերակառուցելու համար:

Կողմ - 7

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄՊԱՐՏԱԿ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՂԻՍԿ

4. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՂԻՍԿ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅՇԱՆ

7. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՍԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱ ՄԿՐՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 21-Ն

ՔԱՍԱԽ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 63-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-ր կետի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է

Քասախ գյուղական համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 14-ի " Քասախ գյուղական համայնքի զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին " N 63-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կապ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԳՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԳԱՄԴԱՐՅԱՆ ՄՊԱՐՏԱԳ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՂԱԿ

4. ՀԱԿՈԹՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՂԱԿ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅՈՒՆ

7. ՄԿԻՏՅԱՆ ԳԴԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱ ՄԿԻՏՅԱՆ



Հավելված

Քառախ գյուղական համայնքի ղեկավարի

2014թվականի դեկտեմբերի 8-ի

N 21-Ն որոշման



**ՔԱՍԱԽ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ**

(ՆՈՐ ԽՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՔԱՍԱԽ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2016թթ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար՝



Ա. Մկրտչյան

Հաստատվել է համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 8-ի N 21-Ն որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

ՔԱՍԱԽ 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

- 1) Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում
- 2) Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶԲԾ-ի հիմնական նպատակների սահմանում
- 3) Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում
- 4) Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում
- 5) Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում
- 6) Համայնքի սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման քառամյա ծրագիրը

Եզրափակում

Հավելվածներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քասախ համայնքի զարգացման ծրագրի մեթոդաբանությունը նվիրված է տեղական ինքնակառավարման կարևորագույն հարցերից մեկին՝ Հայաստանի տեղական ինքնակառավարման միավորի (համայնքի) զարգացման ծրագրերի մշակմանը և կառավարմանը: Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգում երկարաժամկետ պլանավորումը լայնորեն չի օգտագործվում, ինչը պայմանավորված է մի շարք պատճառներով: Դրանցից կարևորներն են՝ տեղական ինքնակառավարման ոլորտում տիրող իրավիճակը, համայնքների ֆինանսական ռեսուրսների (բյուջեների) խիստ սահմանափակ լինելը, մեթոդական բացը, մեծ թվով համայնքներում համապատասխան որակյալ կադրերի բացակայությունը և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) անտեղյակությունը ռազմավարական պլանավորման օգուտներից: Ի տարբերություն երկարաժամկետ պլանավորման, միջնաժամկետ զարգացման ծրագրեր կազմվում են Հայաստանի բոլոր համայնքներում, քանի որ դա օրենքի պահանջ է: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ շատ համայնքներում այդ ծրագրերի կազմմանը լուրջ ուշադրություն չի դարձվում: Դրանք հիմնականում կրում են ձևական բնույթ, որի պատճառների թվում է նաև դրանց մշակման և կառավարման մեթոդական բացը:

Մեթոդաբանությունը սահմանում է համայնքի զարգացման քառամյա ծրագրի (ՀՋԾ) մշակման և կառավարման հիմնական սկզբունքները, մեթոդները, կառուցակարգերն ու ընթացակարգերը, և նպատակաուղղված է համայնքում առկա կարիքների գնահատմանը, հիմնախնդիրների բացահայտմանը, միջնաժամկետ ծրագրերի պլանավորման ու իրականացման միջոցով դրանց լուծմանը և համայնքի զարգացման ապահովմանը:

□ ՀՋԾ-ի մշակման ծրագրային հիմքերը

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը եւ նպատակային քյուջետավարման գործընթացի իրականացումը:

Համայնքի նորընտիր ղեկավարը մշակում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, և իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում ներկայացնում ավագանու հաստատմանը: Համայնքի ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը, անհրաժեշտության դեպքում՝ դրա մեջ կատարում փոփոխություններ և (կամ) լրացումներ և ընդունում է այն՝ նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ: Համայնքի քառամյա զարգացման ծրագրի գործողության ժամկետի ընթացքում համայնքի ավագանու անդամների ընտրություն կայանալու դեպքում՝ ավագանու լիազորությունները ստանձնելուց հետո եռամսյա ժամկետում համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող են առաջարկվել քառամյա զարգացման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ:

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության հավանությանն արժանացած մարզային, տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են.

- 1) համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ.
- 2) շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ.
- 3) համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ.
- 4) աղետների ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ.
- 5) համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- ☐ *համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի բնութագրում (տեքստային նկարագրում),*
- ☐ համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում,
- ☐ համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման հիմնական ցուցանիշների սահմանում (ոչ ֆինանսական և ֆինանսական ցուցանիշներ),
- ☐ համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատում,
- ☐ համայնքում առկա ընդհանուր և ոլորտային հիմնախնդիրների ցանկի կազմում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի, Քասախ գյուղը գտնվում է Երևանից 3 կմ հեռավորության վրա հյուսիս-արևելյան մասում, ծովի մակերևույթից 1100-1400մ բարձրության վրա: Քասախ գյուղը հիմնադրվել է 1965թվականի նախկին Ապարանի շրջանի Քասախ գյուղի բազայի հիման վրա: Ապարանի ջրամբարի կառուցման պատճառով գյուղն ամբողջությամբ վերաբնակեցվեց Աշտարակի շրջան և այն սկզբնական շրջանում անվանում էին 40-րդ սովխոզ: 1972թվականին Նաիրիի շրջանը վերակազմավորելու նպատակով համայնքը մտել է նորաստեղծ շրջանի կազմի մեջ: Այժմ գյուղը գտնվում է Կոտայքի մարզի վարչական կազմի մեջ և գտնվում է մարզկենտրոնից 75 կմ հեռավորության վրա:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2014թվականի հունվարի 1-ի դրությամբ Քասախ համայնքում ապրում է 6085բնակիչ, որոնցից տղամարդիկ կազմում են 48.1 %-ը:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Կանայք-3162
2. Տղամարդիկ-2923
3. Երեխաներ (0-6տ) –577
4. Դպրոցականներ (7-17տ) –760
5. 18-63 տարեկան- 4181
6. Թոշակառուներ-567
7. Հաշվանդամներ-138
8. Աշխատունակներ-4043
9. Գրանցված ընտղների թիվը - 4107
10. Միակողմանի ծնողազուրկ երեխաներ-10
11. Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ-1
12. Հայրենական պատերազմի մասնակիցներ-1
13. Արցախյան պատերազմի մասնակիցներ-33
14. Փախստականներ-350
15. Գործազուրկներ-2621
16. Ընտանիքների թիվը-1704
17. “Փարոս” ընտանեկան նպաստների համակարգում գրանցվածներ-210
18. Հայրենական և արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներ-11
19. Բնակարանի կարիքավոր ընտանիքներ-53

Համայնքն ունի 1704 ծուխ: Վերջին տարիներին նկատվում է նոր ծնված երեխաների աճ:

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Քասախ համայնքը ղեկավարվում է համայնքի ղեկավարի (գյուղապետի) կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Քասախի գյուղապետարանի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը

1. Համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 1-ին ենթախումբ

- 1) Կոտայքի մարզի Քասախի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1)

2. Համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 3-րդ ենթախումբ

- 1) Կոտայքի մարզի Քասախի գյուղապետարանի գլխավոր մասնագետ (ծածկագիր 2.3-1)
- 2) Կոտայքի մարզի Քասախի գյուղապետարանի գլխավոր մասնագետ (ծածկագիր 2.3.-2)

3. Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 1-ին ենթախումբ

- 1) Կոտայքի մարզի Քասախի գյուղապետարանի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-1)
- 2) Կոտայքի մարզի Քասախի գյուղապետարանի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2)
- 3) Կոտայքի մարզի Քասախի գյուղապետարանի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-3)
- 4) Կոտայքի մարզի Քասախի գյուղապետարանի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-4)
- 5) Կոտայքի մարզի Քասախի գյուղապետարանի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-5)

4. Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 2-րդ ենթախումբ

- 1) Կոտայքի մարզի Քասախի գյուղապետարանի 1-ին կարգի մասնագետ

5. Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 3-րդ ենթախումբ

- 1) Կոտայքի մարզի Քասախի գյուղապետարանի 2-րդ կարգի մասնագետ

6. Գյուղապետարանը սպասարկող անձնակազմ

- 1) գործավար
- 2) վարորդ
- 3) այգեպան
- 4) պարետ-պահակ
- 5) հավաքարար

Համայնքի ենթակառուցվածքներն են՝

- ✓ Քասախ համայնքի "Մշակույթի կենտրոն" ՀՈԱԿ -14 հաստիք
- ✓ Քասախ համայնքի "Արվեստի դպրոց" ՀՈԱԿ-18 հաստիք
- ✓ Քասախ համայնքի "Արուսյակ" մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ- 24 հաստիք
- ✓ Քասախի ԿԲՍ գրասենյակ հիմնարկ

Քասախի գյուղապետարանի և նրա ենթակառուցվածքների ամբողջ ապարատը բաղկացած է 82 հոգուց

Համայնքի ավագանին բաղկացած է 11 հոգուց:

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, որը ներկայացված է հավելված 2-ում: Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել էր, սակայն գույքի 60%-ը համայնքի միջոցների, ինչպես նաև պետական և դոնոր կազմակերպությունների միջոցներով աստիճանաբար վերականգնվում են: Սակայն կան դեռևս չլուծված խնդիրներ՝ օրինակ խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1965-1970թվականներին և ներկայումս մաշվածությունն այնքան մեծ է, որ կորուստները հասնում են 30-40%-ի: Կեղտաջրերի հեռացման կենտրոնական խողովակաշարը, որը միանում է Երևանի կենտրոնական կեղտաջրերի հեռացման համակարգին շուրջ 700գ'ծ'մ շարքից դուրս է եկել և այդ հատվածում կեղտաջրերի հեռացումը կատարվում է բացօթյա:

Աղյուսակ 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Հ/Հ	ԿԱՌՈՒՅՑԸ	ՀԱՍՑԵ	ԿԱՌՈՒՑ ՄԱՆ ՏԱՐԵԹ ԻՎԸ	ՄԱԿԵՐ ԵՍԸ՝ քմ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	ՆՈՐՈԳՄԱՆ/ՎԵՐԱ ՆՈՐՈԳՄԱՆ / ՓՈԽԱՐԽՆՄԱՆ ԿԱՐԻՔ	ԱՅԼ ՆՇՈՒ ՄՆԵՐ
1.	Քասախի գյուղապետարան	գ. Քասախ, Ա. Զալալյան հրապ 1	1970 թվակա ն	418,0	գերազանց		
2.	Մշակույթի տուն	Ա. Զալալյան 2	1965 թվակա ն	1451,1	գերազանց		
3.	Մտոր- մանկապարտեզ	գ. Քասախ, Գ. Նժդեհի	1985 թվակա ն	1868,8	բավարար	նորոգման կարիք ունի	
4.	Արվեստի դպրոց	գ. Քասախ	1967 թվակա ն	297,5	վատ	վերանորոգման կարիք ունի	
5.	Բուժամբուլատորիա	գ. Քասախ, Ռ. Սաֆարյան փ. 10/1	1970 թվակա ն	319,0	գերազանց		
6.	2-րդ միջնակ. դպրոց	գ. Քասախ Վ. Տերյան փողոց N1	2013 թվակա ն		գերազանց		
7.	Նախկին նախադպրոցական կառույց	գ. Քասախ Երիտասարդակ ան փողոց N8	1967թ	1197,8	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
8.	Մարզադպրոց	Վ.Սարգսյան փողոց թիվ 11		155,6	լավ		
9.	Մարզադաշտ	Վ. Սարգսյան փողոց			վատ	հիմնանորոգման կարիք ունի	
10.	Հուշահամալիր		1967թ		բավարար		
11.	Զբոսայգի				բավարար		
12.	Պետական բնակելի						

	ֆոնդ և պետական ոչ բնակելի տարածքներ						
13.	Ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ	գ. Քասախ	1971	8կմ	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
14.	Ներհամայնքային նշանակության ջրահեռացման համակարգ	գ. Քասախ	1971	3կմ	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
15.	Ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ	գ. Քասախ	1974	5կմ	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
16.	Ներհամայնքային փողոցներ և հրապարակներ	գ. Քասախ	1987	18կմ	բավարար	վերանորոգման կարիք ունի	
17.	Ներհամայնքային նշանակության ճանապարհներ	գ. Քասախ	1972	20կմ	բավարար	վերանորոգման կարիք ունի	
18.	Ներհամայնքային կամուրջ	գ. Քասախ	1990թ	1 հատ	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
20.	գերեզմանատուն	գ. Քասախ			գերազանց		
21.	Մեքենասարքավոր ումներ և այլ գույք	գ. Քասախ			վատ		

1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքը միջև 1997 թվականի հունվարի 12-ը ունեցել է 12 արդյունաբերական ձեռնարկություն, սակայն այժմ չունի ոչ մեկը, քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այն անցել է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի իրավասության տակ: Սակայն ներկայումս համայնքի տարածքում կան " Հայոց արժիվներ" երիտասարդական ՀԿ, գործում է 7 քաղաքական կուսակցություններ՝ ՀՀԿ, ԲՀԿ, ՕԷԿ, Ժառանգություն, ՀՅԴ, ԺՈՒԿ, ՀԱԿ:

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քասախ համայնքը վերջին 4 տարիների ընթացքում տվել է մոտ 180 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, սա վկայում է այն մասին, որ համայնքը միշտ զարգացման ընթացքում է: 2015 թվականին նախատեսվում է համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի կազմումը, ինչպես նաև նախատեսվում է ունենալ քաղաքաշինական քարտեզ: 2004 թվականիվ համայնքում գործում է Քասախի " Կոմունալ սպասարկման և բարեկարգման գրասենյակ" հիմնարկը, որն ունի 8 աշխատակից և շահույթ հետապնդող կազմերկայություն չի հնադիսանում: Այդ կազմակերպության միջոցով համայնքում շաբաթական երեք անգամ իրականացվում է աղբահանության աշխատանքներ, մաքրվում են համայնքի փողոցները: Քասախ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 62-Ն որոշմամբ հաստատվել է "Քասախ գյուղական համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը", ինչպես նաև ըստ այդ կարգի համայնքի բնակիչների և համայնքի տարածքում գործող կազմակերպությունների հետ կնքվում է աղբահանության պայմանագիր: Համայնքում առկա է ջրմուղու 8 կմ, կոյուղու 3 կմ, ջեռուցման 5 կմ ցանցեր, իսկ ոռոգման ջուրը մատակարարվում է 10 կմ կիսախողովակային, 32 կմ փակ և մոտ 7-8 կմ հողային առունկի ցանցով: Վերջին տարիներին վերանորոգվել է 2460 մ ոռոգման փակ համակարգի ցանցը, որի ընդհանուր արժեքը կազմել է 42458.6 հազար դրամ, որի 4560.0 հազար դրամը ներդրվել է համայնքի կողմից: Չնայած այսքանով հանդերձ ոռոգման համակարգում կորուստները կազմում են 65 %: Սակայն խմելու ջրի ներհամայնքային համակարգը կառուցվել է 40 տարի առաջ և ոչ մի անգամ չի ենթարկվել կապիտալ նորոգման: Նույն վթարային վիճակում է գտնվում նաև կեղտաջրերի հեռացման կոյուղու համակարգը, որի պատճառով հաճախակի են խցանումներ լինում համայնքում: Համայնքում 75%-ով վերականգնվել է փողոցային լուսավորության համակարգը, և համայնքը ամբողջությամբ լուսավորելու համար անհրաժեշտ է մոտ 50.000 հազար դրամի ներդրում: Համայնքը ամբողջովին գրեթե գազաֆիկացվել է և սա նույնպես ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է 30.000 հազար դրամ: Համայնքն ունի 2

գերեզմանատուն յուրաքնայուր ընտանիքին բաժին է ընկնում միջինը 12-15 քմ գերեզմանահող:

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում կա 16 հատ 4, 5 հատ 5 հարկանի, 2 հատ 2 հարկանի բազմաբնակարան շենքեր և 928 բնակարաններ: 2 հարկանի շենքերը շահագործմանն են հանձնվել 2012-2014թվականներին, 250 առանձնատուն, 50 քոթեջատիպ մեկ հարկանի բնակարաններ, 204.0 քմ տարածքով բազմաբնակարան շենքեր: Համայնքը ունի 2 վթարային բազմաբնակարան շենք, որտեղ բնակարանների թիվը կազմում է 80, որոնք ենթակա են ամրացման, սակայն գյուղապետարանը իր ֆինանսական միջոցների սղության պատճառով ի վիճակի չէ կատարել այդ աշխատանքները: Համայնքում կա մոտ 150 ավտոտնակ՝միջինը 50-70 քմ:

1.8 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի հողային տարածքը կազմում է 1217.8 հա, որից

- ❖ Վարելահող-367.37հա
- ❖ Խոտհարք-12.57 հա
- ❖ Արոտավայրեր-217.49 հա
- ❖ Բազմամյա տնկարկներ – 50.9հա
- ❖ Բնակավայրերի հողեր -238.8հա
- ❖ Ջրային ֆոնդի հողեր – 1.37հա
- ❖ Այլ հողեր – 153.9հա
- ❖ Արդյունաբերական հողեր-2.43հա
- ❖ Գյուղ արտադրական հողեր-11.23հա
- ❖ Էներգետիկայի, կապի տրանսպ. կոմունալ ենթ. հողեր-9.11 հա

Հողերի սեփականաշնորհմանը մասնակցել է 1834 ընտանիք, մեկ հողաբաժնի չափը կազմել է 0.24 հա, բնակավայրի տարածքը կազմում է 225.66 հա:

1.9 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քասախ համայնքում գյուղացիական տնտեսությունները զբաղված են դաշտավարությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ, ընդհանրապես գյուղատնտեսության բնագավառում

զբաղված է համայնքի բնակչության 35 %-ը: Համայնքում 2014թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա է 1059 խոշոր եղջրավոր անասուններ, 376 գլուխ խոզեր, 781 գլուխ ոչխարներ և 2737 թև թռչուններ և 63 հատ մեղվաընտանիք: Համայնքի գյուղացիական տնտեսությունները զբաղված են խաղողի, ցորենի, գարու, բազմամյա խոտաբույսերի, ինչպես նաև բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրությամբ, որը խիստ զգայուն է շրջակա միջավայրի նկատմամբ և մեծապես կախված է բնության քմահաճույքից: Ընդահուր առմամբ համայնքում արտադրվում է խնձոր, տանձ, ծիրան, կեռաս, բալ, ընկուզ, միս, կաթ, բուրդ, ձու, մեղր և բանջարաբոստանային մշակաբույսեր: Հողերը համարվում են ոռոգովի հողատարածություններ: Համայնքում արոտավայրերը մեծամասամբ գտնվում են դարավանդների վրա: Դաշտամիջյան ճանապարհները, որոնք համայնքում կազմում են 40-50 կմ, որից 20 կմ ասֆալտապատ են, գտնվում են բարվոք վիճակում: Գյուատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար համայնքում առկա է 7 տրակտոր, 11 բեռնատար-ավտոմեքենաներ, 6 կցասայլեր, 2 տրակտորային խոտհեծիչներ, 2 մանիչ-բարդոձիչներ, 2 գութան, 2 շարքացան:

1.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Չնայած համայնքում աղբահանության գործընթացն իրականացվում է շաբաթական 3 անգամ վարձակալած տրանսպորտի միջոցով, սակայն արդեն ժամանակն է ունենալ սեփական աղբափոխադրիչ տրանսպորտ: Համայնքում ոռոգման ջուրը մատակարարվում է 10 կմ կիսախողովակային, 32 կմ փակ և մոտ 7-8 կմ հողային առունկի ցանցով: Վերջին տարիներին վերանորոգվել է 2460 մ ոռոգման փակ համակարգի ցանցը, որի ընդհանուր արժեքը կազմել է 42458.6 հազար դրամ, որի 4560.0 հազար դրամը ներդրվել է համայնքի կողմից: Չնայած այսքանով հանդերձ ոռոգման համակարգում կորուստները կազմում են 65 %: Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ներհամայնքային համակարգը, որը երբևիցե հիմնովին չի վերանորոգվել, և մոտակա տարիներին չվերանորոգելու արդյունքում համայնքը կկանգնի բարդ խնդրի արջև: Համայնքում չկան անտառապատ տարածքներ, ջրավազաններ և հատուկ պահպանվող տարածքներ: Համայնքն ունի զբոսայգի և երեխաների համար նախատեսված խաղահրապարակ:

1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը սպասարկում է 18-Ա համարի ավտոբուսը և 37 համարի երթուղային տաքսիները: 2012թվականին կատարվել են մոտ 140.702 հազար դրամի ներհամայնքային

ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ: Սակայն դեռևս կան ներհամայնքային ճանապարհներ, որոնք վերանորոգման կարիք ունեն, ինչպես նաև Քասախ համայնքը Դավիթաշեն համայնքին միացնող մոտ 400 մետ ճանապարհի շուտափույթ կառուցման անհարժեշտությունը: Համայնքը Աշտարակի գլխավոր մայրուղուն է կապում 680 մետր ճանապարհը, որը կապիտալ վերանորոգման կարիք ունի և նախահաշվային արժեքը կազմում է 80.000 հազ. դրամ: Համայնքում տեղադրված չեն ճանապարհային նշաններ, որը նույնպես շատ կարևոր է: Սակայն համայնքի փողոցները ամբողջովին անվանակոչված են և համարակալված անհրաժեշտ ցուցանակներով:

1.12 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի առևտրի և սպասարկման ոլորտը գտնվում է լավ վիճակում: Համայնքի բնակչությանը սպասարկում է 15 խանութներ (12 սննդի, 2 կենցաղային, 1 շինանյութի, 1 դեղատուն) և 2 կրպակներ, մեկ սրճարան, 2 հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտներ, 2 բենզալցակայաններ: Առևտրի և սպասարկման ոլորտներում զբաղվածների թիվը կազմում է մոտ 40 մարդ:

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի մեկ նախադպրոցական հաստատություն, որի հզորությունը նախատեսված է 360 երեխաների համար, սակայն ներկա դրությամբ մսուր մանկապարտեզ են հաճախում շուր 120-160 երեխա՝ 5 խումբ, որոնց սպասարկում են 20-25 աշխատողներ: Մանկապարտեզի շենքը ենթակա է կապիտալ վերանորոգման, քանի որ ներկայումս մանկապարտեզ հաճախելու համար հերթագրված են մոտ 80 երեխա, մոտ 60 երեխա էլ հաճախում է Երևան քաղաքի մանկապարտեզ, ուստի վերանորոգման արդյունքում մանկապարտեզը կաշխատի ամբողջ հզորությամբ ինչպես նաև կստեղծվեն մոտ 30 աշխատատեղ համայնքի երիտասարդ կադրերի համար: Համայնքն ունի երկու միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 589 երեխա, աշխատում են 65 ուսուցիչներ և 20 սպասարկող անձնակազմ: Համայնքի 2 դպրոցներն էլ գտնվում են գերազանց վիճակում, ընդ որում 2-րդ միջնակարգ դպրոցը կառուցվել է 2012թվականին պետական բյուջեի միջոցներով:

1.14 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քասախ համայնքում հիմնովին վերանորոգված շենքում գործում է "Մշակույթի կենտրոն" և "Արվեստի դպրոց" ՀՈԱԿ-ները, որտեղ կենտրոնացված են մշակույթի, արվեստի բոլոր բնագավառները: Մշակույթի կենտրոնում գործում են ձեռարվեստի, կարատեի,

ժողովրդական պարի և երգի, մարմնամարզության, օտար լեզուների, ասմունքի, դերասանական և այլ խմբակներ, իսկ արվեստի դպրոցը աճքի է ընկնում դաշնամուրի, ժողովրդական գործքիների քնագավառում: Այստեղ սովորում են շուրջ 275 երեխա, որոնց սպասարկում են 33 աշխատակիցներ: Մշակույթի կենտրոնում է գտնվում նաև համայնքի գրադարանը, որտեղ կա շուրջ 7000 կտոր գրականություն և տարեկան սպասարկում է 1500 ընթերցող: Համայնքն ունի www.kasakh.am ինտերնետային վեբ կայքը, որտեղ տեղ է գտնում համայնքային նորությունները, համայնքում իրականացվող բոլոր միջոցառումները, համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումները, կարգադրությունները, համայնքի բյուջեի ծախսային և եկամտային մասերը և դրանց տնօրինումն ըստ կատարման ժամկետների, ինչպես նաև հայտարարություններ: Քասախ համայնքում ձևավորվել է նաև " Հայոց արծիվներ" երիտասարդական հասարակական կազմակերպությունը և նրանում ընդգրկված երիտասարդների թիվը շուրջ 50-ն է:

1.15 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, որտեղ աշխատում են 6 բժիշկներ և 6 բուժքույրեր, շենքը ամբողջովին վերանորոգվել է Սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով, որտեղ համայնքը նույնպես կատարել է 1380.0 հազար դրամի ներդրում, ինչպես նաև համայնքն իր միջոցներով կատարել է շենքի գազաֆիկացումը: Համայնքում գործում է նաև ՀՀ ԱՆ «Ներդրումների Կլինիկա» ՓԲԸ-ն, սակայն շենքը գտնվում է խիստ վթարային վիճակում և հիմնանորոգման կարիք ունի: Համայնքում գործում է նաև ատամնաբուժարաններ և դեղատուն: Համայնքի սպորտային ոլորտը զարգացած է հատկապես "Կիոկուշին կառատեի" և ծանրամարտի սպորտաձևով: Համայնքում գործում է ծանրամարտի սպորտ դպրոց, որի շենքային պայմանները նույնպես գտնվում են գերազանց վիճակում: Համայնքի կենտրոնում է գտնվում մոտ 13210 քմ ընդհանուր մակերեսով ֆուտբոլի դաշտը, որի 7500 քմ կազմում է խաղահրապարակը և իր չափերով հանրապետությունում զբաղեցնում է 3 տեղը և հիմնովին վերանորոգման կարիք ունի:

1.16 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶՐՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքն ունի 5 հա տարածքով զբոսայգի, որտեղ կառուցված է Հայրենական մեծ պատերազմի զոհվածների հուշարձան-կոթողը և հանդիսությունների սրահ: Վերջինս մինչև 2016 թվականի ավարտը նախատեսվում է վերակառուցել հայ առաքելական եկեղեցու: Տարածքը ամբողջովին ծառապատված է , տեղակայված են նաև երեխաների համար նախատեսված կառույցներ, ինչպես նաև համայնքի անունով նստարաններ և աղբամաններ: Համայնքի յուրաքանչյուր շենքի բակային տարածքները ամբողջությամբ ասֆալտապատ են և յուրաքանչյուր շենքի մուտքերում նույնպես տեղադրված են Քասախ համայնքի անվանումով նստարաններ:

Համայնքի տարեցների համար կառուցվել է 2 զրուցարաններ, որտեղ իրենց ժամանակն են անցկացնում համայնքի տարեց բնակիչները: Համայնքն ունի նաև հանդիսությունների դահլիճ տարբեր բնույթի միջոցառումների անցկացման համար:

1.18 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկան աշխատանքի և սոցիալական ծառայության գործակալություններ: Բնակիչները հիմնականում աշխատանք են փնտրում Երևան քաղաքում, իսկ սոցիալական ծառայությունը գտնվում է Եղվարդ քաղաքում, որը համայնքից հեռու է մոտ 20 կմ, որը բնակիչների համար դժվարություններ է ստեղծվում այնտեղ հասնելու համար:

1.17 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Քասախ համայնքի բնակչությունը մասնակցում է տեղական ինքնակառավարման աշխատանքներին: Համայնքում կադարվող յուրաքանչյուր խոշոր ներդրում կատարելուց առաջ կատարվում է հանրային բաց լսումներ և հաշվի են առնվում համայնքի բնակչության կարծիքը, 2012-2014թվականը կատարվել են մոտ 10 հանրային լսումներ: Բացի դրանից համայնքի www.kosakh.am վեբ կայքի, ինչպես նաև համայնքում տեղադրված հայտարարությունների ցուցադրատախտակների միջոցով բնակչությանն իրազեկվում է համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կայացրած որոշումները: Քասախ համայնքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 13-ի N 37 որոշմամբ հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի Քասախ համայնքի ղեկավարին կից համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու, գործունեության կարգը սահմանելու և հանրային բաց լսումներ կազմակերպելու մասին ” կարգը, որով համայնքի բնակչությունը մասնակցում է համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման), համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների կատարման գործընթացներին:

1.18 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների ռիսկերի կառավարման համար, Քասախ համայնքի ղեկավարի 2013 թվականի օգոստոսի 22-ի N 173 որոշմամբ ստեղծվել է ՀՀ Կոտայքի մարզի Քասախ համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով, ինչպես նաև հաստատվել է հանձնաժողովի կանոնադրությունը և գործունեության կարգը:

1.19 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Քասախ համայնքը մինչ օրս համագործակցում է ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի, "Փրկենք երեխաներին" կազմակերպության Հայաստանյան գրասենյակի և մի շարք այլ համայնքային ներդրումներ իրականացնող ընկերությունների և կազմակերպությունների հետ, որոնք նպաստել են և կշարունակեն նպաստել համայնքի զարգացմանը: Համայնքում 2012թվականից սկսել է ասֆիճանաբար զարգանալ փոքր և միջին ձեռնարկությունները, որին շատ է օգնում Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի Կոտայքի մարզային մասնաճյուղի կողմից իրականացվող տարաբնույթ դասընթացները, խոհրդատվությունները:

1.20 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹ ՀՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.20.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքը գտնվում է Երևան քաղաքի՝ Դավիթաշեն և Աջափնյակ վարչական շրջաններին կից: Չնայած այն բանին, որ մարզկենտրոնի հետ հեռավորությունը կազմում է 75 կմ, իսկ շրջկենտրոնի հետ 20 կմ, տրանսպորտային ամենօրյա կապի շնորհիվ այդ հեռավորությունը մի փոքր մեղմացնում է, սակայն Քասախ համայնքը մոտ է Երևան քաղաքին: Քասախ համայնքը Հանրապետությունում առաջին գյուղական համայնքն է որտեղ ամբողջությամբ կայացած կարելի է համարել տեղական ինքնակառավարումը, և առաջին գյուղական համայնքն է որտեղ համայնքի բոլոր գործառույթները իրականացնում են էլեկտրոնային համակարգով: 2011թվականից համայնքի զարգացման պլանավորման և իրականացման գործում մեծ դեր է խաղացել նաև համայնքի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ներդրումը և օգտագործումը, իսկ 2014թվականի փետրվար ամսից նաև client treasury բյուջեի փոխանցումների համար նախատեսված ֆինանսական ծրագիրը: Համայնքում կա շուրջօրյա ջրամատակարարում: Համայնքը գրեթե ամբողջությամբ գազաֆիկացված է, փողոցները լուսավորված են, շաբաթական 3 անգամ իրականացվում է աղբահանություն: Համայնքում գործում է վերանորոգված մշակույթի տուն, արվեստի դպրոց, չվերանորոգված սակայն գործող մանկապարտեզ: Համայնքի բնակչության 75 %-ը ունի բարձրագույն կրթություն, և որպես զարգացած և բարեկեցիկ համայնք միշտ գտնվում է հանրապետության գործադիր մարմնի ուշադրության կենտրոնում: Համայնքի գրեթե բոլոր ընտանիքները ունեն համակարգիչներ և կարողանում են օգտվել նաև համացանցի ծառայություններից: Հեռախոսային կապի և համացանցի կայուն աշխատանք ապահովելու նպատակով, հանրապետության 3 բջջային օպերատորների՝ Արմենտել, Վիվասել և Օրանժ Արմենիա, կողմից տեղադրվել են ալեհավաքներ:

1.20.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Որպես համայնքի թույլ կողմեր հանդիսանում են նոր ստեղծվող թաղամասի, Մուշ թաղամասի ճանապարհների վաթար վիճակը, գործազրկության մակարդակը հասնում է 45 %-ի, սոցիալապես անապահով բնակչությունը համայնքում կազմում է 30%, իսկ ծայրաստիճան աղքատները 3 %: Վթարային երկու բազմաբնակարան շենքի առկայությունը: Համայնքը ունի բազմաթիվ ծրագրեր, սակայն ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով չի կարողանում իրագործել այդ ծրագրերը:

1.20.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքը գրեթե իր սեփական միջոցներով կարող է իրականացնել համայնքային սեփականություն հանդիսացող ենթակառուցների ընթացիկ նորոգումը, գազաֆիկացման և փողոցային լուսավորության ավարտը, ինչպես նաև ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքները:

1.20.4 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Խմելու ջրի ներհամայնքային համակարգը կառուցվել է 40 տարի առաջ և ոչ մի անգամ չի ենթարկվել կապիտալ նորոգման և եթե առաջիկա 1-2 տարում հիմնական նորոգման չենթարկվի, ապա մաշվածության պատճառով հնարավոր է կեղտաջրերի ներթափանցումը համակարգ, որը կդառնա ինֆեկցիոն հիվանդությունների առաջացման պատճառ: Սակայն նույն վթարային վիճակում է գտնվում նաև կեղտաջրերի հեռացման կոյուղու համակարգը, որի պատճառով հաճախակի են խցանումներ լինում համայնքում: Համայնքի քյուլջեի միջոցների սղու

թյան պատճառով շուրջ 24 տարի է գյուղապետարանը չի կարողանում միջոցներ հայթհայթել մեկ հատ բազմաբնակարան վթարային շենքի հիմքերի ամրացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԲԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Քասախ համայնքի իրավիճակի գնահատման և ՈՒԹ ՀՎ-վերլուծության արդյունքում ՀԶԲԾ ԿՀ-ը սահմանենք համայնքի տեսլականը, ռազմավարությունը և ՀԶԲԾ-ի հիմնական նպատակները՝ ըստ զարգացման ուղղությունների: Համայնքի ռազմավարության հիմնական նպատակը համայնքը

դարձնել բարեկարգ, բարեկեցիկ, բավարարել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

- ✓ 2008-2012թվականների ընթացքում պետական միջոցներով համայնքում վերանորոգվել է մշակույթի տունը և կառուցվել է թիվ 2 միջնակարգ դպրոցը:
- ✓ 2008-2012թվականներին փախստականների համար ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակ և "Փրկենք երեխաներին" Հայաստանյան գրասենյակի միջոցներով և համայնքի համաֆինանսավորմամբ կառուցվել է 2 հատ 2 հարկանի բազմաբնակարան շենք, 44 ընդհանուր բնակարանների թվով:
- ✓ 2011թվ-ին" Փրկենք երեխաներին" Հայաստանյան գրասենյակի միջոցներով և համայնքի համաֆինանսավորմամբ վերանորոգվել է «Արուայակ» մսուր մանկապարտեզի 1 դասասենյակ և իրականացվել է մանկապարտեզի 4 խմբի ջեռուցման համակարգի աշխատանքները, իսկ 2013թվականին ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի կողմից կառուցվեց մանկապարտեզի խաղահրապարակը և սպորտդահլիճը:
- ✓ 2015-2016թթ-ին նախատեսվում է մսուր մանկապարտեզի շենքի վերանորոգման և գույքով ապահովման աշխատանքների իրականացում, որը համարվում է համայնքի ներկայիս առաջնային խնդիրը, քանի որ նախադպրոցական հաստատության շենքի հզորությունները նախատեսված են 360 երեխաների համար, սակայն շենքի անմխիթար վիճակի պատճառով մանկապարտեզ են հաճախում 160 երեխա՝ 5 խումբ:
- ✓ 2013-2016թվականների ընթացքում մարզային ծրագրերով համայնքում նախատեսվում է իրականացնել ներհամայնքային, միջհամայնքային ճանապարհների կառուցման, վերանորոգման աշխատանքներ:
- ✓ Նախատեսվում է նաև, որ մասնակցելով համայնքների միավորման ծրագրին, հասնել այն բանին, որ Քասախ համայնքի վարչական տարածք ընդգրկել նախկին Քասախ արտադրական հանգույցը և Վահագնի թաղամասը:
- ✓ Համայնքի հիմնական նպատակներից է հանդիսանում նաև համայնքային սեփականություն հանդիսացող հանդիսությունների տունը, որը գտնվում է համայնքի գրոսայգում, վերակառուցել հայ առաքելական եկեղեցու, քանի որ համայնքն ունի 6300 բնակչություն և նրանց հոգևոր դաստիարակության համար եկեղեցու առկայությունը պատրադիր և անհրաժեշտ է:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Բարեփոխումներ կատարելով՝ Քառախ համայնքում նախատեսվում է հասնել հետևյալ ծրագրերի և միջոցառումների իրականացմանը՝

- Մասնակցել համայնքների միավորման ծրագրին
- Մուտք-մանկապարտեզի կապիտալ վերանորոգում և գույքով ապահովում
- Մշակույթի տան գույքով ապահովում
- Հանդիսությունների տունը հայ առաքելական եկեղեցու վերակառուցում
- Արվեստի դպրոցի կապիտալ վերանորոգում
- Կոյուղու խողովակների վերանորոգում
- Խմելու ջրագծերի կառուցում
- Ոռոգման փակ խողովակաշարի անցկացում
- Բազմաբնակարան վթարային շենքերի հիմքերի ամրացում
- Մարզահամալիրի կառուցում
- Մարզադաշտի վերանորոգում և կառուցապատում
- Գազաֆիկացման ավարտ
- Փողոցային լուսավորության ավարտ
- Զբոսայգու կառուցում և կանաչապատման աշխատանքներ
- Ներհամայնքային փողոցների և ճանապարհների կառուցում և վերանորոգում

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Աղյուսակ 2. Համայնքի 2012-2013թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2014-2016թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար

Հ/հ	Մուտքերի անվանումը	2012թ. փաստ	2013թ. փաստ.	2014թ. նախատ	2015թ. կանխ.	2016թ. կանխ.
1	2	3	4	5	7	8
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	212658.2	118443.1	308846.7	302438.5	281986.2
1.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	82540.4	95160.9	104846.7	117438.6	133986.2
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	21121.6	21848.8	21903.7	23348.5	24585.6
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	13865.1	14101.63	14235.3	14832.8	15241.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	7323.8	7560.27	8262.8	8782.8	9056.5
	Հողի հարկ	6541.3	6541.36	5972.5	6050.0	6184.5
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	6166.7	6530.07	6509.4	7356.7	8024.8
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	6166.7	6530.07	6509.4	7356.7	8024.8
1.3	Ապրանքների օգտագործման կամ	1089.8	1217.1	1159.0	1159.0	1320.0

	գործունեության իրականացման թույլտվության վճարներ					
	Տեղական տուրքեր	1089.8	1217.1	1159.0	1159.0	1320.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Պետական տուրքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
1.5	Այլ հարկային եկամուտներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների քնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	61418.8	73312.1	82943.0	94090.1	109400.6
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	61418.8	73312.1	82943.0	91,664.6	106664.6
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	60226.8	69391.9	80517.5	91,664.6	106664.6
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	1192.0	3920.2	2425.5	2425.5	2736.0
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0.0	0.0	0.0	0.0	0.0
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	3884.3	4111.14	7659.2	4314.2	5107.2
3.1	Տոկոսներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.2	Շահաբաժիններ	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	684.3	647.94	647.2	314.2	307.2
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	107.3	107.65	107.2	107.2	107.2
	Համայնքի վարչական տարածքում գտնվող	0.0	0.0	0.0	0.0	0.0

	պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ					
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	177.0	140.0	140.0	140.0	200.0
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	400.0	400.0	400.0	67.0	0.0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.5	Վարչական գանձումներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Տեղական վճարներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից					
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.9	Այլ եկամուտներ*	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	3200.0	3463.2	7012.0	4000.0	4800.0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՏՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	130117.8	23282.2	204000.0	185000.0	148000.0
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0

	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Շարժական գույքի իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.	Պաշարների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
4.	Զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Հոդի իրացումից մուտքեր	130117.8	23262.24	204000.0	185000.0	148000.0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱՎԱՍՏՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	1949.1	2947.2	8284.8	923.0	1150.0
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	1949.1	2947.2	8284.8	923.0	1150.0
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ	0.0	0.0	0.0	0.0	0.0
1.1	Արժեթղթեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-հիմնական գումարի մարում	0.0	0.0	0.0	0.0	0.0
1.2	Վարկեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-վարկերի ստացում	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում	0.0	0.0	0.0	0.0	0.0
1.3	Փոխատվություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-բյուջետային փոխատվությունների ստացում	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-ստացված փոխատվությունների գումարի մարում	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.	ՖԻՆԱՆՍԱՎԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	1949.1	2947.2	8284.8	923.0	1150.0
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.2	Փոխատվություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-փոխատվությունների տրամադրում	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	1949.1	2947.2	8284.8	923.0	1150.0

2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում	0.0	0.0	0.0	0.0	0.0
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը	0.0	0.0	0.0	0.0	0.0
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	0.0	0.0	0.0	0.0	0.0
1.	ՓՈԽԱԴՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ	0.0	0.0	0.0	0.0	0.0
1.1	Արժեթղթեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-հիմնական գումարի մարում	0.0	0.0	0.0	0.0	0.0
1.2	Վարկեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-վարկերի ստացում	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում	0.0	0.0	0.0	0.0	0.0
1.3	Փոխատվություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-փոխատվությունների ստացում	0.0	0.0	0.0	0.0	0.0
	-ստացված փոխատվությունների գումարի մարում	0.0	0.0	0.0	0.0	0.0

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

